



ՊՐՈՖ.-ԴՈԿՏ. Լ. ՄԵԼԻՔՍԵՐ-ԲԵԿ

## ՍՈՒՐԲ ՀՌԻԹՈՒՄԵՒ ԵՎ ՍՈՒՐԲ ԳԱՅՉԱՆԵՒ ՎԱՆՔԵՐԻ ԵՐԿԼԵԶՎԱՆ ԶԱՓԾՈ ՏԱՊԱՆԱԳՐԵՐԸ

**այ-վրացական փոխհարաբերությունների պատմության մեջ ժղոարի երկրորդ կեսին և ժթ դարի սկզբներին որոշ դեռ են խաղացել, ինչպես հայտնի է, այլևայլ պատմական գելքեր թե՛ հայերից և թե՛ վրացիներից։ Դրանցից ոմանց գործունեությունը, չհաշված Սայթ-Նովային և Հովսեփի արքեպիսկոպոս Արդությանին, անմիջապես ընթացել։ Է Հայաստանում՝ պարսից տիրապետության օրոք, Մենք ի նկատի ունենք, մի կողմից՝ Դավիթ վարդապետ Հորդանյան-էնագեթցուն (Հետագայում՝ Դավիթ հակաթոռ կաթողիկոսը, 1801—1804 թ. թ.) և մյուս կողմից՝ Ալեքսանդր Հերակլի (Էրեկլեի) որդի, վրաց արքայազնին։**

\*\*\*

Դավիթ վարդապետ էնագեթցու էջմիածնում գործելու ժամանակաշրջանին է համընկնում 1784 թվականի սեպտեմբերի 22-ին վախճանված նրա մոր՝ Աննայի տապանագիրը Ս. Հոփիսիմեի վանքի արևելյան պարսպից դուրս գտնվող գերեզմանատանը, երկու լեզվով. մեկն ընդարձակ և շափած՝ հայերեն, և մյուսն համառոտ և արձակ՝ վրացերեն։

Տապանաքարը, որի արձանագրությունը մենք ընդորինակել էինք դեռևս 1924 թվականին և հրատարակել 1930 թվականին<sup>1</sup>,

<sup>1</sup> Լ. Մելիքսեր-Բեկ, «Սայաթ-Նովա», Թբիլիսի, 1930, էջ 14—15 (վրացերեն)։

ինչպես նորերս ստուգեցինք, իր տեղում այլևս չի գտնվում<sup>2</sup>։

Հստ մեր ընդորինակման՝ այն կարդացվում էր այսպես.

«Այս է տապան դամբարանի Աննա անուն կնոջ բարի, կողակցի Դավթեան Բէրոյի և մայր երկուց հարազատի, նաև կրոսերագոյն՝ Բարսեղի, էր սա երկրաւ վրաստանցի, բնիկ տեղեաւ էնագեթցի, ինդրէ ի ձէնց, եղրարք բարի, որք հանդիպիք, տալ ողորմի. Որ վախճանի ի ՌՄՂ թուոչ ի սեպ[ տեմբերի ] իթ»,

Վրացերեն արձանագրությունը կարդացվում էր այսպես.

«+Էս սափիլի էնագէլի Բէրոաս մէկուլէ Անսախա. շէնդորա բծանէթ»։

Նույնը մեր հայերեն թարգմանությամբ.

«Այս դամբարանը էնագեթցի Բերոյի ամուսին Աննայինն է, ողորմի հրամայեթ»։

\*\*\*

Վրաց արքայազն Հերակլի (Էրեկլեի) որու գործունեության հետ, որի մասին հայոնթերցողը որոշ գաղափար ունի և. Աբով-

<sup>2</sup> Ինչպես այս փաստի ստուգման, նույնպես և Ս. Գայանեի վանքում մեր կատարած աշխատանքներին մասնակցեցին պատմական գիտությունների թեկնածուներ Ս. Խարիսութարյանն ու Վ. Գրիգորյանը։

յանի<sup>3</sup>, Թաֆֆու<sup>4</sup> և Աղ. Երիցյանի<sup>5</sup> գործերից, կարծես թե առնչվում է Ս. Գայանեի վանքի բակում, տաճարի հարավ-արևելյան անկյունում, գտնվող 1822 թ. Երկեղյան շափածո տապանագիրը, որը միաժամանակ բավականին հետաքրքիր նմուշ է Հայոցական ֆոլկլորային ստեղծագործության:

Տապանաքարը ներկայացնում է իրենից

1. Ի ՍՄԻ Ն Տ Ա ՊԱՆԻ
2. Դ ՆԻ ՄԱՐ ՄԻ Ն ՄԱ
3. ԹԻ ՆԱ ԹԻ ՆԻ Ո Ր
4. ՊԱՐ Ո Ն ԳՐԻ Գ ՈՐԻ
5. Ե ԱՆ Ա Զ Գ Է ԱՆ ՈՒ
6. Ք ԱՆ Զ Ա Ղ Ա Լ Օ
7. ՄՐԲ Ա Ս Է Ի Ր ԳԵ Օ Զ
8. Ն Թ Ե Ր Յ Օ Ղ Ց
9. ԱՐ Ժ ԱՆԻ Զ Ի Լ Ի
10. Ռ Կ Ն Ի Ց Կ Ա Յ ԱՆ Ի

սովորական մեծության դեղնագույն եղնջաբար (օնիկս), որը ԺՇ դարի վերջերին և ԺՇ դարի սկզբներին օգտագործվում էր թե՛ Հայաստանում և թե՛ Վրաստանում, մասնավորապես էջմիածնի և Թբիլիսի գերեզմանատներում<sup>6</sup>:

Հայերն արձանագրությունը, որը գլխատառով է փորագրված, գրաված ունի 10 տող երկուուն դասավորությամբ.

- Հ ԱՆ Գ ՈՒ Ց Ե Ա Լ
- Հ Տ Ե ՍԻ Ա Ց Ն
- Է Ր Կ Ո Ղ Ա ԿԻ Ց
- Ի Ց Ա Լ ԹԻ Բ Է Շ
- ԱՆԻ ՆԱ ԵԽ Է Ր Զ Ո
- Բ Է Կ Ի ԵԽ ՄԱ Ց Ր
- Ա Լ Խ ԱՆ ՈՒ ՄԻ Ը
- Ի Շ ՄԱ Ն ԱՐ Ա
- Ց Ի Բ ՆԱ Կ Օ Ղ Ց Ե
- Ի 1822 Օ Գ Ո Ս Ո ՄԻ

Սույն արձանագրությունը շափածոյի վերածված ընթերցանությամբ տալիս է 9

տող (յուրաքանչյուրը 5+5 վանկ)՝ ի հանգով.

ա. Ի սմին տապանի | հանգուցեալ || գ<ը>նի

Մարմին մա | հտեսի այն || Թինաթինի,

Որ | էր կողակից || պարոն Գրիգորի |

Ի Յալթիբէշ || եան ազգէ անու | անի.

բ. Նա եւ էր զո || քանչ Աղալօ | բէկի

Եւ մայր || ս<ը>բբասէր Գիօզ | ալ խանումի:

Բ | նթերցօզ, յ | իշման արա | արժանի,

Զի լի | ցի բնակօզ յե || ըկնից կայանի | .

Ի 1822 օգոստոսի 6.

<sup>3</sup> Խ. Արովյան, «Երկերի լիակատար ժողովածու», ութ հատորով, հատ. Գ, Երևան, 1948, էջ 121—Հմմտ. մեր հոդվածը՝ «Դրական հանդես», Թբիլիսի, 1941, № 1, էջ 34—35:

<sup>4</sup> «Վրաց իշխան արքայազն Ալեքսանդրի կյանքից Պարսկաստանում», «Մշակ», 1872, № 25:— Բաֆֆի, «Երկերի ժողովածու», հատ. Թ, Երևան, 1958, էջ 32—34:— Նույնը վրացերեն՝ «Դրուբա», 1872, 21. VII, № 28:

<sup>5</sup> «Վրաց լիակատար առաջարկան առաջին շառավիղը», «Արձագանք», 1882, № 12, էջ 177—180:

<sup>6</sup> Մ. Ս. Բետան, «Օ Կավազսկոմ մրամօրոն օնիք», Տիֆլիս, 1901, стр. 16—17.

<sup>7</sup> Այս երկաղը մի տեսակ արաֆարետ է, որի նմանը կարդացվում է շատ տեղերում, օրինակ, Թբիլիսիի Վանքի մալր եկեղեցու բակի 1812 թվականի հոկտեմբերի 22-ի երկեղյան տապանագրում. «Ի սմին տապանի ամփոխել դնի մարմին Աւետիսի թեթիսունց տոհմի». և այլն.

Վրացերեն արձանագրությունը «միսեդրովի» (փոքրատառ բոլորագիր) միասյուն 5 տողանի է և կարդացվում է այսպես.

1. +աղվէսրովէ ղ՝վավիլ մոսովի խորցի մկուդրիսա արա թու սովի ար մղ՝վանդա ձմանի խորլ ասովլի:

2. մէ վիղ՝ավ էգրէթ նաթէլ նախովի սախէլ մէծողա միղդիս թինաթին սոփլադ վիցոցիլ սամոցի ծլամդին:

3. միզլովէթ էրնո դա ուցխո թէմնո ագրէթէտ տոմնո դա նաթէսավնո մքոնդա պատիվի կէթիլվնորանի:

4. թքվէնց շէքխուղէրիս դրո էսրէթ ժամնի էրից գիխսնիս թքվէն դա էրթ ձմանի ած դավիթէց միծադ միծանի:

5. հո աղվէսրովէ ագվիստոս վ՝սա ծէլսա քրիստէսիթ հղ՝կր.

Արձանագրությունը շափածոյի վերածված ընթերցանությամբ տալիս է 14 տող (յուրաքանչյուրը 5+5 վանկ), այսպիսի հանգավորումով. 1—4 տողերը՝ ովլի, 5—6 տողերը՝ ին, 7—8 տողերը՝ նո, 9—12 տողերը՝ նի, 13—14 տողերը՝ սա:

ա. ք<ան> աղ[ վ ]էսրովէ ղ՝վավիլ  
մոսովլի,

խորցի մկուդրիսա, արա թու սովի.  
ար մղ՝վանդա ձմանի, [մ] Խոլոդ

ասովլի.  
մէ վիղ՝ավ էգրէթ նաթէլնախովլի:

բ. սախէլ մէծողա միղդիս թինաթին,  
սոփլադ վիցոցիլ սամոցի ծլամդին.  
միզլովէթ, էրնո դա ուցխոթէմնո,  
ագրէթէտ տոմնո դա նաթէսավնո:

շ. մքոնդա պատիվի կէթիլվնորանի,  
թքվէնց շէքխուղէրիս դրո էսրէթ,  
էրից գիխսնիս թքվէն դա էրթձմանի,  
ած դավիթէց միծադ միծանի:

դ. հո, աղվէսրովէ ագվիստոս վ<ին>սա  
ծէլսա քրիստէսիթ չ<ին>ղ՝<ար>  
կ<ան> բ<ան>սա:

նույնը մեր հայերեն թարգմանությամբ.

ա. Վախճանվեցի ծաղկազարդվածս՝  
Մարմին մեռյալի և ոլ թե ոգի,  
Չունեի եղբայրներ, ունեի միայն մի  
դուստր,  
Սյասպես էի լուսատես:

բ. Անոնս էր միղդիս թինաթին,  
Աշխարհումս կացի մինչ վաթսուն  
տարի.

Ողբացե՛ք, ապինք և այլազգիք,  
Նույնպես և ցեղք ու ազգակիցք:

գ. Ունեի պատիվ պարկեշտի.

Դուք էլ կհանդիպեք այսպիսի պահին,  
Ձեզ կփրկեն ազգն ու հարազատները,  
Ահա վայր ընկա գետնին հողածինս:

դ. Վախճանվեցի օգոստոսի 6-ին,  
Քրիստոնեական թվականի 1822-ին:

Տապանագրի ինչպես հայկական, նույնպես և վրացական մասում հիշված ննջեցյալը մահտեսի (միղդիս) թինաթինն է, որը 1822 թվականի օգոստոսի 6-ին վախճանվել է 60 տարեկան հասակում. հետևապես ծնված պիտի լինի 1762 թվականին:

Բացի դրանից, հայերեն արձանագրությունը, որը լիովին վրացերենին լի համընկնում (և ոչ էլ վրացերենը հայերենին), ի վիճակի է հաղորդել նաև տվյալներ հիշյալ թինաթինի ազգականների՝ հարազատների մասին, որոնցից ոմանք պատմական դեմքեր են՝ կապված իրենց գործոննեության այլայլ թերոր Ալեքսանդր վրաց արքայազնի և Ա. Մ. Գրիգորեանի հետ:

Այսպես, օրինակ, պարզվում է, որ մահտեսի կամ միղդիս թինաթինը եղել է ամուսին պարուն Գրիգորիս՝ Յալթիրեշյան առնվանի ազգից՝ և զոքան Աղալու բեկի:

Յալթիրեշյանը, հավանական է, նույն Ալթի-բեշյանը լինի, որ հիշված է ժթ դարի 20-ական թվականների մի վրացերեն վավերագրում իրուն թրիլիսիի առեւրապական, որը խանութ (դուքան) է ունեցել<sup>8</sup>:

Թինաթինը ունեցել է մի զավակ, այն է դուստր՝ Գյողալ-խանում կամ Գյողալ-խաթուն անունով, որն ամուսնացած է եղել Աղալու բեկի հետ:

Աղալու բեկ անունով հայտնի են 2 անձնավորություն ԺԸ գարի վերջերին և ԺԹ դարի սկզբներին. Դրանցից մեկը Ղորդանյան-էնագեթցին է, որը միջնորդի դեր է խաղում վրաց արքունիքի և ոռա գեներալների, ինչպես նաև նույն արքունիքի և էջմիածնի, ասել է ամենայն հայոց կաթողիկոսների հարաբերությունների մեջ, հաճախ իրուն լոկ նամակատար, եղբեմն էլ իրուն վրաց արքունի գույքի ցուցակագրող<sup>9</sup>, իսկ մյուս Աղալու բե-

8 Ն. Թերենենիշվիլի, «Եյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», III, Թրիլիսի, 1955, էջ 510—511 (վրացերեն):— Մամիսա Թերենենիշվիլի, «Եյութեր Վրաստանի տնտեսական պատմության համար», հավելված. I, II, III գրքերի բառարան և ցանկերը, Թրիլիսի, 1958 (վրացերեն):

9 Ն. Թերենենիշվիլի, հիշված աշխատությունը, I, Թրիլիսի, 1938, էջ 160, 289—290 (վրացերեն), նույնը, III, 1955, էջ 102, 275—281, 435—443, 458—463, 510—511, 539—552:— Գյուտ ավագ հանան Աղալույան, «Երիվան հայոց պատմության» 7, 139, 191, 545, 7, 748—750, 9, 486—487, Ը, 34, 97, Բ. 387, ԺԱ, 377:

կը, հավանական է, նույն Աղալար-խանը լինի՝ Էնիկոլոփիլան ազգատոհմից, որը կապված էր, մի կողմից, Ալեքսանդր արքայազնի հետ (որն ամուսնացած էր երեանցի Մելիք-Աղամալյան Սահակի դստեր՝ Մարիամի հետ) և մյուս կողմից՝ Ա. Ս. Գրիբուեովի հետ<sup>16</sup> (որն ամուսնացած էր «Հայկական մարզի» առաջին պետ՝ գեներալ Ալեքսանդր Շավճավածի դստեր՝ Նինովի հետ):

Ահա այս երկրորդ Աղալոն պիտի լինի, անկասկած, այն անձը, որին հասցեագրված էն Ատրպատականի հայոց առաջնորդ Բարսեղ արքեպիսկոպոսի նամակները, որոնցից մեկում, 1829 թվականի մոտերքում գրվածում, նա հիշված է իրեւ «գերապատիւ օրհնեալ Աղալոյ բէկ միրզայ Գուրզինհան ենակօլոփիվ»<sup>17</sup>:

Նույն Բարսեղ արքեպիսկոպոսի այլ նամակներից պարզվում է նաև, որ «Մանուչարիանի և Աղալոյ բէկի մայրը» եղել է «Ոսկեայ մեծ խանումն», որ «առ Աստուած փոխեալ է ի Թեհրանն Պարսից», նմանապես և՝ որ «Աղալոյ բէկի բրոջ որդի միրզա Սողոմոնն սպանեալ էին ընդ գեսպանին [Գրիբուեովի]» և «սոցա երկոցունց դիակացեալ մարմինսն Հրամանաւ Մանուչար-խանին եկն ի նախիզան և աստէն մեծաւ յուղարկատրեալ հանդիսիւ ի ճանապարհ եղաք դէպ ի Սուլր էջմիածին, զի ընդ բարեպաշտեալ կտակի Ոսկեայ խանումին անդ ի Ս. էջմիածին ի սիրտ երերի թաղեսցի, ուր ուրեք շիրմանցն մերձ արժանաւոր համարիցի սրբազն հոգենոր կառավարութիւնս»<sup>18</sup>:

Ցարական կառավարության պաշտոնական վավերագրերում Աղալոն հիշվում է իրեւ ազնվական (ՁՈՎՐՅԱՆԻ Ագալ Ենիկոլոպօ), որը 1804 թվականին մտադիր է եղել փախչել Պարսկաստան<sup>19</sup>, որին ընդդիմադրել է գեներալ Գուրզովիլուր, ապա նա հիշվում է իրեւ օսմանյան գործերի հետախուզող 1806 թվականին<sup>20</sup>: Մի վավերագրում ևս Աղալոն կոշլած է կալվածատեր, որն ունեցել է ճորտ գյուղացիների<sup>21</sup>:

Աղալոյին հատուկ գլուխ ունի նվիրված հ. Արրովյանի ընկերակից Գալուստ Շերմա-

10 Վ. Պարսամյան, «Ա. Ս. Գրիբուեովը և հայութիւն արարերութիւնները», Երևան, 1947, էջ 23 և այլն. Հմմա. Ա. Կ. Ենիկոլոպօ, «Գրիբոեդ և Վոստօք», Երևան, 1954, ստ. 179, պր. 2.

11 Վ. Պարսամյան, հիշյալ գիրքը, էջ 217.

12 Նույն տեղում, էջ 219—220 (ընդգծումը մերեւումի մէջ մեր էլ. Մ.-Բ.):

13 «Акты Кавказской Археографической комиссии», т. II, стр. 332.

14 Նույն տեղում, III, էջ 577—578.

15 Центральный Государственный исторический архив Грузии. Путеводитель, под редакцией А. Иовидзе, Тбилиси, 1947, стр. 33.

դան-Վարդանյանն իր հանրածանոթ գրքի մեջ<sup>22</sup>, «Աղալո-աղայ, որ և Աղալար-խան Էնիկոլոփիկանց» հնթավերնագրի տակ:

Ըստ այս գիրքի տեսության, Աղալոն մանկությունից սովորել և տիրապետել է Հայերենին, վրացերենին, արաբերենին, պարսկերենին և թաթարերենին և «շափահաս լինելուց հետո նշանակում է Գիորգի վրաց թագաժառանգի գունը թարգման»<sup>23</sup>: մի ժամանակ նա լինում է Ախալցիի կից «փաշայի մուտ թարգման հայոց, վրաց և պարսկացումների»<sup>24</sup>, ապա նաև ուստերենի: Գեներալ Նևալյուստամի հանձնարարությամբ 1806 թվականին նա բանակցում է Ախալցիի կից Սելիմ փաշայի հետ: 1808 թվականին նա փախցում է էջմիածին և այստեղից թավրիզ, ուր ծառայում է պարսկաց թագաժառանգ Արասմիրզայի մոտ, երբ և վերակոշվում է Աղալար-խան<sup>25</sup>:

Գ. Շերմազան-Վարդանյանը վկայում է, որ «Աղալար-խանը վախճանեցաւ 1846 թուականի յուղիսի 26-ին և թաղուցաւ թաւրիզը բերդի մէջ եղած Ս. Աստուածածնի եկեղեցու գավթի հին պարտէզի հիւսիսային կողմում, հին առաջնորդարանի առջեն»<sup>26</sup>:

Ինչ վերաբերում է Գյողալ-խանումին, նա, ըստ նույն Գ. Շերմազան-Վարդանյանի, «մեծ օժանդակ եղաւ իւր ամուսնոյ վարկն ու կարզը բարձրացնելու մասին, նամանաւանդ, որ Գյողալ-խանումը խելացի, ճարտարախօս և երեւելի սանտիկին էր, վասն որոյ և Արասմիրզան հրամայեց նրան արձակ-համարձակ եկմատու առնել իւր կանանցը, ուր և տիկինները կ'ընդունէին շատ պատուվ և լարգանքով. վասն զի ոչ միայն լաւ ձեռագործեր կաներ, այլև շատ լաւ քաղցրաւենիք պատրաստել գիտէր, զորս կը սովորեցնէր տիկիններին»<sup>27</sup>:

Այս Գյողալ-խանումը, ըստ նույն պատմիչի, «խողիբայից վախճանեցաւ 1846 թվականի հոկտեմբերի 26-ին»<sup>28</sup>:

Ինչ վերաբերում է այն հացցին, թե ինչու է տապանագրի թիմաթինը՝ «մահատեսի» (հայերենում) և «միղղիս» (վրացերենում) կողված, զա, հավանական է, կապված լինի այն հանգամանքի հետ, որ նա իրեւ ամուսին մեծատուն վաճառական Գրիգոր Ալթի-

16 «Նիկեր ազգային պատմութեան համար, երեւելի շայիկունը և Պարսկաստան», աշխատասիրութեամբ Գայուս Շերմազանեանի, Ռուսով (Դոնի վերայ), 1890, էջ 311—323:

17 Նույն տեղում, էջ 311:

18 Նույն տեղում, էջ 312:

19 Նույն տեղում, էջ 313:

20 Նույն տեղում, էջ 323:

21 Նույն տեղում, էջ 315:

22 Նույն տեղում, էջ 323:

բեշյանի (որին վիճակվում էր առևտրական գործերով լինել այլամայ երկրներում), գոնեմի անգամ եղած լիներ ուստի Երուաղեմ, որի այցելումներն էին սովորաբար կոչվում «մահտեսի»— մղդսի (այսինքն Քրիստոսի գերեզմանն այցելողներ):

Անորոշ է միայն, թե ինչո՞ւ այս Թինաթինը թաղվել է Ս. Գայանեի վանքի բակում 1822 թվականի օգոստոսի 6-ից հետո<sup>23</sup>, ինչպես և անորոշ են 1829 թվականին սպան-

ված Աղալոյի քրոջ որդու՝ Սողոմոնի և նույն Աղալոյի մոր՝ Ոսկյա-խանումի դամբարան-ների տեղերը էջմիածնում:

Սակայն անկախ այս բոլորից, «մահտեսի Թինաթինի» տապանագրի մշակումը երկու լեզվով՝ հայերեն և վրացերեն, այն էլ շափած ձևով, ինքնին վկայում է գրական որոշ ճաշակ ունեցող արվեստագետների մասնակցության մասին այդ գործում ինչպես Հայաստանից, նույնպես և Վրաստանից:

### Յ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

Մ Ա Խ Ն Դ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն Տ Ա Խ Ն Տ Ա Կ

Մահտեսի Թինաթին (Միղդիս Թինաթին)	↔	Պարան Գրիգոր Ալիքիքեյան ծն. ?, վախճ. ?, 1862, վաղված 1822, թաղված վանքի բակում	↔	Ուկյա-խանում ծն. ?, վախճ. 1829, թաղված էջմիա- թաղված ? ծնում
-------------------------------------	---	-----------------------------------------------------------------------------------------------	---	--------------------------------------------------------------------------

Գյոզալ-խանում ծն. մինչ. 1810, վախճ. 26 հոկտ. 1846 խոլերայից, թաղված ?	↔	Աղալո-բեկ (Աղալար-խան) ծն. ?, վախճ. 26 հուլիս 1846, թաղ- ված Թավրիզում	↔	Մանուչար-խան թաղված ? ծն. ?, վախճ. ?, վախճ. ?, թաղված ? ծնում	↔	Մելիմով ? ծն. ?, սպանված թերանում 1829, թաղված էջմիածնում
-----------------------------------------------------------------------------------	---	------------------------------------------------------------------------------------	---	------------------------------------------------------------------------------	---	-----------------------------------------------------------------------

Պայմանական հասնելու	
↔	ամուսնացած
	սերունդ

<sup>23</sup> Օգտվում ենք առիթից որպեսզի նշենք, որ այս Թինաթինի դամբարանի հենց կողքին, արևելքից, ամփոփված է 1955 թվականի 9 հոկտեմբերին վախճանված Մայր Ս. էջմիածնի Գերագույն Հոգածուր:

Խորհրդի պատվավոր անդամ Ստեփան Օհանջանի կամսարականի մարմինը, որի հողակույտը պսակված է այժմ Հայապատասխան հուշարձանով և տապանավորվում:

